Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Նախագծային մեթոդի կիրառումը հասարակագիտության դասերին

Կատարող՝ Արմինե Հովսեփյան

Դպրոց՝ Երևանի Գևորգ Էմինի անվան N182 ավագ դպրոց

Առարկա՝ հասարակագիտություն

Կազմակերպություն՝ «Կրթություն առանց սահմանի» ՀԿ

«Պատմություն և աշխարհագրություն» խմբի պատասխանատու՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Սիմա Դայան

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
Հետազոտության թեմայի արդիականությունը 3
Հետազոտության նպատակը և խնդիրները 4

ԳԼՈՒԽ 1. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ 5

1.1. Նախագծային մեթոդի ընդհանուր բնութագիրը և դասակարգումը. 5
1.2. Նախագծերի իրականացման փուլերը և կազմակերպման ձևեր 8
1.3. Ուսուցչի դերը նախագծային գործունեությունում. 10
1.4. Նախագծի գնահատման չափանիշները. 10

ԳԼՈՒԽ 2. ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ. 11

2.1. Ուսումնական հետազոտական նախագծերի իրականացման առանձնահատկությունները հասարակագիտության դասերին. 11
2.2. Նախագծային աշխատանքի օրինակ «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման շրջանակներում. 13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. 17
ՀԱՎԵԼՎԱԾ. 18
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ. 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը

Ժամանակակից հասարակության զարգացման միտումները նոր պահանջներ են առաջադրում կրթական գործընթացին: Մի կողմից փոխվում է կրթության բովանդակությունը և մեծանում աշակերտի ծանրաբեռնվածությունը, մյուս կողմից՝ կարիք կա որակապես նոր դասավանդման մեթոդների, որոնք ոչ միայն կմիավորեն բազմազան գիտելիքները մեկ միասնական համակարգի մեջ, այլև կձևավորվեն երեխաների՝ ժամանակակից աշխարհում կյանքի համար անհրաժեշտ կարողություններ: Սովորողների գիտահետազոտական գործունեությունը ժամանակակից դպրոցում կրթության առաջադեմ ձևերից է: Այն թույլ է տալիս առավելագույնս բացահայտել և զարգացնել երեխաների ինչպես ինտելեկտուալ, այնպես էլ պոտենցիալ ստեղծագործական կարողությունները: Հետազոտական գործունեության ընթացքում դաստիարակվում է ստեղծագործ անհատականություն, որն ունակ է ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ և հմտություններ, դրանք ազատորեն կիրառել իր գործունեության մեջ:

Կարևորելով նախագծեր կազմելու և դրանք իրականացնելու գործընթացը՝ առաջադեմ մի շարք երկրներ իրենց կրթական համակարգ ներմուծեցին նախագծային ուսուցումը՝ այդպիսով հնարավորություն տալով ապագա քաղաքացիներին վաղ տարիքում կազմելու և իրականացնելու զանազան նախագծեր: Վերջին շրջանում մեր կրթական համակարգ նույնպես ներմուծվեց նախագծային ուսուցումը: ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ[1] հաստատվեց «Հանրակրթության պետական չափորոշիչ»-ը, որի 46-րդ կետը սահմանում է. «7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր աշակերտ տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ իր ընտրած առարկայից կամ առարկաներից»:

Այսպիսով, մեր երկրում ևս մեծ թափով արդիականացվում է կրթության ոլորտը՝ որպես նորարարություն դիտարկելով նաև ուսուցման նախագծային մեթոդը: Փաստորեն նախագծային ուսուցման իրականացումը օրենքի ուժ է ստանում և իր ուրույն տեղը զբաղեցնում մանկավարժական մեթոդների շարքում:

---

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտական աշխատանքի նպատակն է կարևորել արդի կրթական համակարգում նախագծային մեթոդի դերը և կիրառման անհրաժեշտությունը ՝ որպես սովորողներին դեպի ուսումնական գործընթաց ուղղորդելու արդյունավետ միջոց: Հետազոտական աշխատանքի նպատակից բխում են հետևյալ խնդիրները.

- ներկայացնել նախագծային ուսուցման մեթոդի էությունը,
- վերհանել նախագծային մեթոդի կիրառման սկզբունքները,
- ուսումնասիրել նախագծային մեթոդի կիրառումը սովորողների արտադասարանային գործունեության ժամանակ:

ԳԼՈՒԽ 1

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՄԵԹՈԴԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Նախագծային մեթոդի ընդհանուր բնութագիրը և դասակարգումը

Ասա ինձ, և ես կմոռանամ:
Ցույց տուր ինձ, և ես կհիշեմ:
Ներգրավիր ինձ, և ես կսովորեմ:

Նախագծային մեթոդը ժամանակակից ուսուցման ինտերակտիվ մեթոդներից մեկն է: Այն հանդիսանում է ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մաս: Ինչպես նշել է Ե. Ս. Պոլատը, նախագծերի մեթոդի կիրառման փորձերը ցույց են տվել, որ միասին սովորելը ոչ միայն հեշտ է ու հետաքրքիր, այլ նաև ավելի արդյունավետ: Նախագծերի մեթոդ ասելով հասկանում ենք ուսուցման գործընթաց, որի ժամանակ սովորողը գիտելիք և կարողություններ է ձեռք բերում աստիճանաբար բարդացվող գործնական առաջադրանքների՝ նախագծերի ինքնուրույն պլանավորման և կատարման ընթացքում: Նախագծային ուսուցման կենտրոնական հասկացությունը նախագիծն է՝ սովորողի համար կենսական կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծման մտահղացումը: Նախագիծ բառը առաջացել է լատիներեն «projektus» բառից, որը բառացիորեն նշանակում է «նետում առաջ», իսկ ֆրանսերեն «projet» բառը թարգմանվում է՝ «նպատակ, որը պետք է իրականացվի ապագայում»: Նախագծերի մեթոդն առաջացել է նախորդ հարյուրամյակի սկզբին: Նրա հիմնադիրներ են համարվում ամերիկացի գիտնական-մանկավարժներ Ջոն Դյուին և Ուիլյամ Հերդ Կիլպատրիկը: Նրանք առաջարկում էին ուսուցումը կազմակերպել ակտիվ հիմունքներով, աշակերտի գործնական աշխատանքի միջոցով՝ կողմնորոշվելով հետագա կյանքում վերջինիս անձնական հետաքրքրությամբ և ստացված գիտելիքների գործնական պահանջվածությամբ: Այսօր նախագծերի մեթոդը հաջողությամբ զարգանում է, լայնորեն կիրառվում ամենատարբեր ուսումնական խնդիրների լուծման ժամանակ: «Ես գիտեմ, ինչի համար է ինձ պետք այս ամենը: Ես գիտեմ, թե որտեղ և ինչպես կարող եմ այն օգտագործել»՝ ահա ժամանակակից նախագծերի մեթոդի հիմնական թեզը: Ամերիկացի մանկավարժ և նախագծային մեթոդի հիմնադիր Ուիլյամ Կիլպատրիկը մանկավարժության բնագավառում այս մեթոդի կիրառելիությունը բնորոշել է որպես նպատակահարմար գործունեության մեթոդ, որը կապված է իրական կենսական միջավայրում դպրոցական խնդրի լուծման հետ: Այլ կերպ ասած՝ նախագծային մեթոդն ուսումնական գործունեության ձև է[2]:

---

[2] Шелканова Г. В. , Проектная деятельность учащихся, “Химия: методика преподавания”. 2005. №2. С. 67-71

Այս դեպքում սովորողներն անմիջականորեն ներառված են ակտիվ իմացական գործընթացում, ինքնուրույն ձևակերպում են ուսումնական խնդիրը, հավաքում են անհրաժեշտ տեղեկություններ, մշակում խնդրի լուծման տարբերակները, վերլուծում աշխատանքի արդյունքները, կատարում եզրահանգումներ՝ ձեռք բերելով ուսումնական կենսափորձ: Ուսումնական նախագիծ ասելով հասկանում ենք սովորողների ստեղծագործական հետազոտական խնդրի լուծման ցանկացած գործունեություն՝ նախապես անհայտ արդյունքով, ի տարբերություն լաբորատոր աշխատանքի: Հետևաբար, նախագիծն ավելի լայն հասկացություն է, քան հետազոտական աշխատանքը և ընդգրկում է վերջինս՝ որպես ուսումնական նպատակներին հասնելու միջոց: Այսպիսով.

- Նախագծային մեթոդի կիրառումը նպաստում է ծրագրային նյութի ընկալմանը, թույլ է տալիս բնականոն կերպով զարգացնել անհրաժեշտ ուսումնական ունակություններ, ձևավորել հաղորդակցային կարողություններ, մեծ դեր է խաղում սովորողների պատասխանատվության, ինքնուրույնության, խմբի հետ աշխատելու ունակության զարգացման գործում:
- Նախագծային մեթոդը հնարավորություն է տալիս սովորողներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ՝ կոնկրետ հանձնարարություններ պլանավորելու և ինքնուրույն իրականացնելու համար: Արդյունքը՝ տեսանելի, ներկայանալի, հրապարակված աշխատանքն է, որն ամբողջապես սովորողի ինքնուրույն աշխատանքի արգասիքն է:
- Նախագծային ուսուցումը սովորողի համար այնքանով է հետաքրքիր, որ աշխատանքների իրականացնողը, նախագծողը, տեղեկատվության համակարգողը, վերլուծողը հենց ինքն է՝ սովորողը: Իսկ այսօրվա սովորողը, ով ունի այլ մտածողություն ու ժամանակի զարգացումներով պայմանավորված կրթական պահանջմունքներ, ինչպես գիտենք, շատ հաճախ է ուսուցչից պահանջում հենց նմանօրինակ դասեր անցկացնել:
- Նախագծային ուսուցումը սովորողին մղում է մտածելու, ստեղծելու, համեմատելու, զուգահեռներ անցկացնելու: Սովորողը աշխատանքի ընթացքում դառնում է հետազոտող, բացահայտող, նորարար, ուստի այս աշխատանքները գրավիչ ու հետաքրքիր կարող են լինեն սովորողի համար:
- Նախագծային գործունեությունը կազմակերպելիս հաշվի են առնվում սովորողների տարիքային առանձնահատկությունները, պատրաստվածությունը, հետաքրքրությունները, ՏՀՏ-ի կիրառման հմտությունները: Աշխատանքը թույլ է տալիս ակտիվացնել բոլորին, ներգրավել նույն նպատակի իրականացման մեջ:

- Բացի այդ, մեծ հնարավորություններ են բացվում դպրոցականների, ուսուցիչների և ծնողների համատեղ ճանաչողական և գործնական գործունեության կազմակերպման համար:
- Նախագծային ուսուցման մեթոդն իր էությամբ մոտ է պրոբլեմային ուսուցմանը, որը առաջարկում է սովորողների մոտ ճանաչելի խնդրի հետևողական և նպատակամղված լուծում, որի միջոցով նրանք ուսուցչի ղեկավարությամբ ակտիվորեն նոր գիտելիքներ են սովորում:
- Նախագծային մեթոդը նմանություն ունի զարգացնող կրթության հետ: Զարգացնող կրթությունը ուսուցման միջոց է, որի դեպքում աշակերտը հանդիսանում է այդ գործունեության ամբողջական սուբյեկտը, գիտակցելով դնում է ինքնակառավարման նպատակներ ու խնդիրներ և ստեղծագործելով հասնում է դրանց իրականացմանը[3]:

Գոյություն ունեցող մանկավարժական պրակտիկան հիմք է տալիս նախագծերը դասակարգելու հետևյալ կերպ[4].

- ✓ ըստ նախագծի մշակմանը մասնակցող աշակերտների թվի՝ տարբերում են անհատական կամ խմբային նախագծեր,
- ✓ ըստ բովանդակության՝ մոնոառարկայական (իրականացվում է կոնկրետ առարկայի նյութի շրջանակներում), միջառարկայական (ինտեգրում է մի քանի առարկաներ) և վերառարկայական նախագծեր,
- ✓ ժամկետային առումով նախագծերը կարող են լինել՝ կարճաժամկետ (մի քանի դասի ընթացքում իրականացվող), միջնաժամկետ (1-2 ամիս տևողությամբ) կամ երկարաժամկետ (կիսամյակային կամ տարեկան),
- ✓ գերիշխող գործունեության ձևից կախված՝ տարբերում են տեղեկատվական, հետազոտական, ստեղծագործական, գործնական ուղղվածությամբ (կիրառական), հեռահաղորդակցական դերախաղային նախագծեր:

Բայց, անկախ նախագծի տեսակից, յուրաքանչյուրն.

- ինչ-որ չափով անկրկնելի է և յուրահատուկ,
- միտված է կոնկրետ նպատակին հասնելուն,
- սահմանափակված է ժամանակի մեջ,
- պահանջում է փոխկապակցված գործունեության համակարգված իրականացում:

---

[3] Ступницкая М.А. , Что такое учебный проект? М.: Первое сентября, 2010. — 44 с,, https://project.1september.ru/files/Chto-takoe-uchebniy-proekt.pdf

[4] Маркачев А. Е., Т. А. Боровских, Г. М. Чернобельская. Применение метода проектов в школьной практике, “Химия в школе”. 2007. №2. С. 34-36

1.2. Նախագծերի իրականացման փուլերը և կազմակերպման ձևերը

Չնայած թեմաների բազմազանությանն ու տարբերությանը՝ ըստ դժվարության և աշակերտական հետազոտության խորության, բոլոր նախագծերը բնութագրվում են իրականացման նույն մոտեցմամբ: Տարբերում են նախագծերի իրականացման հետևյալ փուլերը[5]՝

1) նախապատրաստական,
2) պլանավորման,
3) հետազոտման,
4) արդյունքների քննարկման,
5) գնահատման:

Նախապատրաստական փուլում հստակեցվում է աշխատանքի բովանդակությունը, որոշվում է նախագծի թեման և նպատակը, հիմնախնդրի ներկայացման ձևը: Սովորողները քննարկում են թեման ուսուցչի հետ և ստանում անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ, ապա դնում նպատակներ: Ուսուցիչը ծանոթացնում է սովորողներին նախագծային մեթոդի իմաստին ու պարզաբանում հետազոտության մեթոդները:

Պլանավորման փուլում ուսուցիչը կատարում է նախապատրաստական աշխատանք: Իր խնդիրներում ներառում է աշակերտների գիտելիքների հիման վրա առաջնային գաղափարների առաջադրումը, աշակերտների հակումների, հետաքրքրությունների և հնարավորությունների բացահայտումը, նախագծերի թեմաների առաջադրումը, վարկածների ձևակերպումը, պլանի մշակումը, աշխատող խմբերի ձևավորումը, նախագծի ղեկավարի ընտրությունը: Կարևոր պահ է ռեսուրսային ապահովվածությունը՝ համակարգչային սարքավորումների, աուդիո, վիդեո, պատճենահանման տեխնիկայի տրամադրումը, գրադարանային սպասարկումը: Մասնակիցների պարտավորությունների բաշխումը կատարում են իրենք՝ սովորողները՝ բաց քննարկմամբ: Ուսուցիչը նույնպես հայտնում է իր կարծիքը: Խիստ կարևոր է հենց սկզբից հստակ սահմանել նախագծի յուրաքանչյուր մասնակցի խնդիրն ու կատարելու ժամկետը: Կարելի է կազմել մոտավոր ժամանակացույց, որում կնշվեն յուրաքանչյուր փուլի ավարտի ժամկետը և ակնկալվող արդյունքները:

---

[5] Чайка А. Н.. Метод проектов в образовательном пространстве в школе,Химия в школе. 2006. №6. С. 48-52., նաև՝ Шелканова Г. В.,. Проектная деятельность учащихся, “Химия: методика преподавания”. 2005. №2. С. 67- 71

Հետազոտման փուլում աշակերտները գտնում ու հավաքագրում են տեղեկություններ՝ օգտագործելով գրականության աղբյուները, զանգվածային լրատվամիջոցները, համացանցը: Ուսուցիչը աշակերտների ուշադրությունը բևեռում է տեղեկատվության հավաքման այնպիսի մեթոդների վրա, ինչպիսիք են դիտարկումը, անկետավորումը, վիճակագրական հարցումները, փորձի իրականացումը: Գրականության հետ աշխատելու համար՝ առաջին փուլում ուսուցիչը սովորեցնում է սեղմագրման սկզբունքները: Աշակերտները յուրացնում են տեղեկատվության հավաքման հմտությունը, զարգացնում են տեղեկատվությունը համեմատելու, դասակարգելու, վերլուծելու և համեմատելու ընդունակությունը: Կարելի է նաև խումբը բաժանել չորս ենթախմբի: Առաջինը կարող է պատրաստել գրականության վերաբերյալ ակնարկը, երկրորդը՝ նախապատրաստել և կատարել փորձնական մասը, երրորդը՝ նախագծի համակարգչային ներկայացումը, իսկ չորրորդը՝ պատրաստի դպրոցական համաժողովի համար կատարված աշխատանքի մասին զեկույց:

Արդյունքների ներկայացման և քննարկման (հաշվետվության) փուլում սովորողներին տրվում է նախագծի ներկայացման ձևի ընտրության ընթացքում առավելագույն ազատություն, որը կարող է կատարվել տարբեր ձևերով՝ բանավոր հաշվետվություն, բանավոր հաշվետվություն՝ նյութի ցուցադրումով, գրավոր հաշվետվություն: Սովորողները քննարկում են դրանք, իսկ ուսուցիչը լսում և նպատակային հարցեր է առաջարկում կամ ելույթ ունենում՝ որպես սովորական մասնակից: Նախագծային գործունեության վերջնական արդյունքը ներկայացվում է զեկուցման, համակարգչային ներկայացման, ցուցատախտակի համար պատրաստված հոդվածի ձևով: Արդյունքների և գործընթացի գնահատումը կատարվում է կոլեկտիվ քննարկման միջոցով: Ուսուցիչը գնահատում է սովորողների ջանքերը, նրանց ստեղծագործական ունակությունները, տեղեկատվական աղբյուրների օգտագործման որակը, աշխատանքի շարունակականության հնարավորությունները, հաշվետվության որակը[6]:

---

[6] Նավասարդյան Ս., Սահակյան Լ, Նախագծային մեթոդը որպես սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց, Մանկավարժություն, 5/2013, էջ 54-63:

1.3. Ուսուցչի դերը նախագծային գործունեությունում

Նախագծումը դպրոցում հնարավոր չէ արդյունավետ իրականացնել առանց ուսուցչի ակտիվ դիրքորոշման: Դա սովորողի և ուսուցչի համատեղ ստեղծագործ աշխատանք է: Արդյունքում փոխվում է հոգեբանական մթնոլորտը դասարանում: Այդ պրոցեսում ուսուցչի ավանդական դերը նույնպես փոխվում է: Ուսուցիչը հեղինակավոր տեղեկատվության աղբյուրից դառնում է հետազոտական, ստեղծագործական գործընթացի մասնակից, սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպիչ, խորհրդատու: Դա հանգեցնում է սովորողների կենտրոնացված և ինքնուրույն գործունեության աճին:

Նախագծային աշխատանքում ուսուցիչը.

- օգնում է աշակերտներին որոնելու անհրաժեշտ տեղեկույթի աղբյուրը,
- ինքն է հանդիսանում տեղեկույթի աղբյուր,
- համակարգում է ամբողջ գործընթացը,
- խրախուսում է սովորողներին,
- պաշտպանում է սովորողների հետ մշտական հետադարձ կապ: Ուսումնական նախագծերի աշխատանքում պետք է ուշադրություն դարձնել ոչ այնքան այն բանին, թե ինչ է ստացվել, որքան, թե ինչ ճանապարհով է ստացվել ցանկալի արդյունքը:

1.4. Նախագծի գնահատման չափանիշները

Նախագծային աշխատանքը թույլ է տալիս իրականացնել յուրաքանչյուր սովորողի գիտելիքների ու կարողությունների համալիր գնահատում: Նախագծային աշխատանքի ստեղծագործական հաշվետվությունը կարելի է համարել ամփոփիչ ատեստացիա (քննություն): Այդ դեպքում ուսուցիչը յուրաքանչյուր աշխատանքի համար պետք է պատրաստի գրախոսական: Շնորհանդեսից հետո խիստ կարևոր է աշակերտների հետ քննարկել արդյունքները, նշել դրականը, քննարկել թերություններն ու նշել նախագծային աշխատանքները բարելավվելու կապակցությամբ սովորողների առաջարկները (ռեֆլեքսիայի սկզբունք): Նախագծում ամենից առաջ պետք է գնահատել աշխատանքի ընթացքն ու նպատակի իրականացման որակը, և ոչ թե միայն շնորհանդեսը:

ԳԼՈՒԽ 2.

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ «ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

2.1. Ուսումնական հետազոտական նախագծերի իրականացման առանձնահատկությունները հասարակագիտության դասերին

«Ամենակարևոր բաները մեզ ոչ ոք չսովորեցրեց: Սովորեցինք այբուբենը, թվերը, բազմապատկման աղյուսակը, հին ու նոր պատմական իրողությունները, սակայն ոչ ոք չսովորեցրեց ինչպես հասկանալ դիմացինին, ինչպես պաշտպանել ինքդ քեզ, ինչպես ընկալել շրջապատող աշխարհում կատարվող բաները: Թողեցին, որ այս ամենը սովորենք ինքնակրթությամբ, կամ մեր սրտերի վրա ստացած վերքերով, իսկ վերքերը սպիներ են թողնում:»

Վարդգես Պետրոսյան

Գրողի վերոհիշյալ մտահոգության տեսանկյունից «Հասարակագիտություն» առարկայի կրթական ներուժը ժամանակակից աշխարհում խիստ կարևորվում է: Այն միակ առարկան է, որը կրթում և դաստիարակում է ապագայի քաղաքացուն, ով պետք է դիմակայի աշխարհի վայրիվերումներին ու համահունչ քայլի դարի հետ, այս ինֆորմացիոն դարում ճիշտ կողմնորոշվի, լինի ստեղծագործող, դիրքորոշված, պրպտող, կշռադատող, հետազոտող ու մեկնաբանող, ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային ու համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական և կայուն զարգացման արժեհամակարգով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացի: Նախագծային ուսուցումը հատկապես աջակցում է ավագ դասարաններին՝ սովորողների ուշադրությունը կենտրոնացնելով հանրային քաղաքականության զարգացմանը, նպաստում քաղաքացիական մասնակցության կարևորության ըմբռնմանը և նրանց մեջ ձևավորում մի շարք քաղաքացիական հմտություններ:

«Հասարակագիտություն» առարկայի ուսուցման շրջանակներում նախագծային հետազոտական աշխատանքների անհրաժեշտությունն ավելի ու ավելի է կարևորվում հատկապես հասարակական կյանքի հիմնախնդիրներ լուծելու տեսանկյունից, երբ ուսումնառության գործընթացի կենտրոնում սոցիալական այնպիսի նշանակալից թեմաներ են, որոնք բխում են աշակերտների հետաքրքրություններից և նրանց հուզող հարցերից: Ներկայացվող հիմնախնդիրներն ուսումնասիրվում են համակողմանիորեն: Նպատակը սովորողների՝ հասարակական կյանքին պատասխանատու մասնակցության համար անհրաժեշտ գիտելիքների խորացումն ու իրական կյանքում լավ քաղաքացի լինելու հմտությունների զարգացումն է: Կարևոր խնդիրներից այն է, որ ուսուցիչը

սովորողի հետ կատարում է հետազոտություն, որի ընթացքում վերջինս ձեռք է բերում գործելաոճի փորձառնություն: Նախագծային ուսուցման ընթացքում ստեղծվում են պայմաններ, որպեսզի ուսումնառողներն ինքնուրույն ձեռք բերեն գիտելիքներ տարբեր աղբյուրներից, սովորեն օգտվել ձեռք բերված գիտելիքներից՝ հիմնախնդիրների լուծման համար, ձեռք բերեն հաղորդակցման կարողություններ՝ աշխատելով տարբեր խմբերում, զարգացնեն հետազոտական ունակություններ (խնդիրների բացահայտման, տվյալների հավաքագրման, դիտարկման, վերլուծության, համադրման ունակություններ) և հանդես բերեն քննադատական մտածողություն: Հնարավոր է օգտագործել տեղեկատվության տարբեր աղբյուրներ (գիտական գրականություն, տարբեր տեսակի փաստաթղթեր, վիճակագրական հրապարակումներ և այլն): Նախագծերի իրականացման հիմքում հիմնականում դրված է «Սովորել միասին» մեթոդը, որը միտված է սովորողների հաղորդակցական հմտությունների և թիմային աշխատանքի հմտությունների զարգացմանը, ինչը կարևոր է հետազոտական գործունեության համար: Այն հիմնված է բազմաստիճան խմբերի աշխատանքի վրա, որոնցից յուրաքանչյուրը ստանում է մեկ առաջադրանք, որը ինչ-որ մեծ թեմայի ենթաառաջադրանք է: Խմբի ներսում սովորողները ինքնուրույն որոշում են յուրաքանչյուրի դերերը՝ այդպիսով ապահովելով սովորելու մոտիվացիա:

Իսկ ինչպե՞ս պետք է ընտրվեն հիմնախնդիրները: Կարևոր է հիշել երկու չափանիշ՝

– խնդիրների ընդհանուր կարևորությունն այն հասարակության և քաղաքական միջավայրի համար, որում ապրում ենք,

– խնդիրների անհատական կարևորությունը մեր և անհատների համար:

2.2. Նախագծային աշխատանքի օրինակ «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման շրջանակներում

2018 թվականին վերապատրաստվել եմ Սիվիտաս-Հայաստան հասարակական կազմակերպության և Կենտրոնական բանկի հետ համատեղ իրականացված նախագծային ուսուցման ծրագրին, որը հատկապես արդյունավետ էր թեմաները գործնական աշխատանքի՝ նախագծային ուսուցման միջոցով սովորելու տեսանկյունից:

Այժմ հանգամանորեն կներկայացնեմ «Գովազդը որպես կողմնակի ճնշում» նախագծային հետազոտական աշխատանքը: Այն իր մեջ ներառում է և՛ գովազդի թեման, և՛ օրենսդրությունը, և՛ արված հարցումները, և՛ մեր գործողությունների ծրագրի առաջարկը…

Նախևառաջ, մինչ բուն հիմնախնդիրն ուսումնասիրելը սովորողները պետք է ըմբռնեն «Հանրային քաղաքականության» իմաստը: Անհրաժեշտ է բացատրել, որ քաղաքականության ձևավորումը սկսվում է, երբ համայնքի անդամները գիտակցում են խնդրո առարկան: Կարևոր է, որ սովորողները յուրացնեն իշխանության (տեղական, մարզային, հանրապետական) դերը հանրային քաղաքականության ձևավորման մեջ: Շատ էական է, որ սովորողները գիտակցեն, որ իրավասու են ասել, թե իրենց կարծիքով իշխանությունն ինչ քայլեր պետք է ձեռնարկի իրենց համայնքում ծագած հիմնախնդրի լուծման համար: Ծագած հիմնախնդիրների լուծմանն արդյունավետորեն մասնակցելու համար նպատակահարմար է, որ քաղաքացին տեղեկանա իշխանության այն օղակների և կազմակերպությունների մասին, որոնք պատասխանատու են օրենքների, ենթաօրենսդրական, նորմատիվային փաստաթղթերի մշակման, ընդունման, փոփոխման կամ զարգացման համար:

Այնուհետև խնդիրը հետազոտելու և լուծելու համար անհրաժեշտ են որոշակի քայլեր.

1. Բացահայտել ուսումնասիրվող հիմնախնդիրը – Որոշել, թե ո՞ր հիմնախնդիրն է ավելի արդիական և կարևոր, թե իշխանության ո՞ր օղակն է պատասխանատու այդ խնդրի լուծման համար:

2. Հավաքել տեղեկություններ – Երբ դասարանն արդեն որոշել է, թե ինչ հիմնախնդիր է ուսումնասիրելու, պետք է տարբեր աղբյուրներից տեղեկություններ հավաքի և արժևորի դրանք:

3. Դիտարկել այլընտրանքային լուծումներ – Հաջորդ քայլում պետք է իրենց ընտրած խնդրի վերաբերյալ դիտարկեն իշխանության վարած քաղաքականությունը, ինչպես նաև բացահայտեն այլ անձանց կողմից առաջարկված տեսակետները:

4. Զարգացնել սովորողների տեսակետը որևէ հանրային քաղաքականության վերաբերյալ – Հաջորդիվ նրանք պետք է մշակեն հանրային այնպիսի քաղաքականություն, որը նպատակահարմար են գտնում իշխանության կողմից իրականացնելու համար:

5. Կազմել գործողությունների պլան - Սովորողները պետք է մշակեն գործողությունների պլան, որը կբացահայտի, թե որքանո՞վ կարող են ներազդել իշխանության վրա, որպեսզի այն որդեգրի այնպիսի հանրային քաղաքականություն, որն ուղղված լինի իրենց առաջադրած խնդրի լուծմանը:

Հավաքած բոլոր նյութերը պետք է տեղադրել ուսումնական թղթապանակում, որը ներառում է այնպիսի նյութեր, ինչպիսիք են.

- գրավոր հայտարարություններ,
- սխեմաներ,
- լուսանկարներ,
- աղյուսակներ,
- գրաֆիկներ:

Ուսումնական թղթապանակը կարելի է շնորհանդեսի միջոցով ներկայացնել դպրոցական համայնքին, ինչպես նաև սովորողները կարող են թղթապանակը ներկայացնել միջդասարանային և միջդպրոցական մրցույթների ժամանակ: Նախագծի վերջնական արդյունքի հանրային ներկայացման հեռանկարը մեծացնում է նախագծի նկատմամբ լրջությունն ու պատասխանատվությունը:

Այժմ հանգամանորեն անդրադառնամ վերոնշյալ նախագծի իրականացման քայլերին:

<u>Քայլ 1 – Համայնքային հիմնախնդիրները</u>: Նախագծային աշխատանքի իրականացման սկզբում սովորողները վերհանեցին մի շարք համայնքային հիմնախնդիրներ, դասարանով քննարկեցին դրանք և փոխանակվեցին գիտելիքներով:

<u>Քայլ 2 – Հիմնախնդրի ընտրությունը դասարանի ուսումնասիրման համար</u>: Այնուհետև սովորողները բաժանվեցին 2-3 հոգանոց խմբերի և սկսեցին քննարկել այն հիմնախնդիրը, որն իրենց կարծիքով կարևոր է: Բերված հիմնավորումների արդյունքում խմբերը եկան փոխհամաձայնության՝ ընտրելով «Գովազդը որպես կողմնակի ճնշում» հիմնախնդիրը:

<u>Քայլ 3 – Դասարանի կողմից ընտրված հիմնախնդրի մասին տեղեկատվության հավաքում</u>: Այս փուլում սովորողները պետք է որոշեին, թե որտեղից և ինչպես կարող են գտնել լրացուցիչ տեղեկություններ: Այնուհետև բաժանվեցին որոնող/ուսումնասիրող խմբերի:

Յուրաքանչյուր խումբ պետք է տեղեկություն հավաքեր հետևյալ աղբյուրներից՝ գրադարաններ, լրատվամիջոցներ, գիտամանկավարժական աշխատողներ, փաստաբաններ և դատավորներ, համայնքային կազմակերպություններ և շահագրգիռ խմբեր, օրենսդիր մարմին, վարչական հիմնարկ – ձեռնարկություններ, համացանց:

Աշխատանքներն ընթացան հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Հարցադրում ***(տե՛ս Հարցաթերթիկ, Պատկեր 1):***

Նպատակն էր հիմնախնդիրը քննարկել ուսուցիչների հետ, ընտանիքում, ընկերների շրջապատում, հարևանների հետ և հնարավոր այլ միջավայրերում՝ բացահայտելու, թե նրանց ինչ է հայտնի տվյալ հիմնախնդրի մասին:

2. Տպագիր աղբյուրներ: Լրագրերում կամ այլ տպագիր աղբյուրներում սովորողները փնտրեցին իրենց առաջադրած հիմնախնդրի վերաբերյալ տեղեկություններ: Ընտրված նյութերի մասին մտքեր փոխանակեցին դասարանցիների, ուսուցիչների հետ:

3. Ռադիո - հեռուստատեսային և համացանցային տեղեկատվություն: Սովորողները ռադիո - հեռուստածրագրերից, համացանցից ընտրեցին իրենց կողմից հետազոտվող խնդրին վերաբերող ծրագրեր և հավաքագրեցին տեղեկություններ: Մասնավորապես ուսումնասիրվեցին ՀՀ-ում առևտրային գովազդային հարաբերությունները կարգավորող օրենքները:

<u>Քայլ 4 – Դասարանի թղթապանակի ձևավորում և մշակում</u> ***(տե՛ս Սխեմա, Նկար 1):***

Անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելուց հետո սովորողներն իրենց ցանկությամբ ընտրեցին թղթապանակի չորս խմբերից մեկը, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատու էր թղթապանակի իր բաժնի համար: Դասարանի հավաքած ողջ տեղեկատվությունից ընտրվեց ամենաարժեքավոր տեղեկությունը: Խնդրի լուծման համար կիրառվեցին նաև սովորողների կողմից գրված կարծիքների բնօրինակները, ինչպես նաև նրանց պատրաստած նկարներն ու ձևավորումները:

Այժմ ներկայացնեմ կազմավորված խմբերը:

<u>Թղթապանակի խումբ 1</u>. Հիմնախնդրի բացահայտում - Այս խումբը պետք է ներկայացներ և հիմնավորեր դասարանի ընտրած հիմնախնդրի հրատապությունը և լուծման անհրաժեշտությունը: Խումբը նաև պետք է նշեր, թե իշխանության ո՞ր մարմինը պետք է զբաղվի հիմնախնդրի լուծմամբ և ինչու՞:

<u>Թղթապանակի խումբ 2</u>. Այլընտրանքային քաղաքական ծրագրերի քննարկում - Այս խումբը պատասխանատու էր հիմնախնդրին առնչվող այլընտրանքային քաղաքականություններ ներկայացնելու և դրանք գնահատելու համար:

<u>Թղթապանակի խումբ 3</u>. Դասարանի կողմից հանրային քաղաքականության մշակում և առաջարկում - Այս խմբի պարտավորությունն էր հիմնավորել դասարանի կողմից ընտրված հանրային քաղաքականության արդյունավետությունը հիմնախնդրի լուծման համար:

<u>Թղթապանակի խումբ 4</u>. Գործողությունների պլանի մշակում - Այս խումբը պարտավոր էր առաջարկել հետագա գործողությունների պլան, որը ցույց կտար, թե քաղաքացիները ինչ չափով կարող են ազդել իշխանության տարբեր օղակների վրա՝ հիմնախնդրի վերջնական լուծմանը հասնելու համար:

Չնայած յուրաքանչյուր խումբ ուներ կոնկրետ հանձնարարությունների ցանկ, շատ կարևոր էր ապահովել խմբերի միջև հաղորդակցությունը և համագործակցությունը՝ թղթապանակի ձևավորման բոլոր փուլերում: Համագործակցությունը հնարավորություն ընձեռեց խուսափելու կրկնություններից և ընտրելու լավագույն տեղեկատվությունը:

<u>Քայլ 5 – Թղթապանակի շնորհանդես</u> (տե՛ս Նկար 2, Պատկեր 2):

Դասարանի թղթապանակը ներկայացվեց հանդիսատեսի/հանձնաժողովի դատին: Դա հնարավորություն տվեց մարդկանց փոխանցել հայտնաբերած տեղեկատվությունը, վերլուծությունները և եզրակացությունները:

<u>Քայլ 6 – Անդրադարձ</u>: Նախագծի իրականացման ողջ ընթացքում սովորողները և ուսուցիչը պետք է պարբերաբար անդրադարձ կատարեն իրենց անցած ուղուն՝ պատասխանելով հետևյալ հարցերին. ի՞նչ են սովորել, ինչպե՞ս են սովորել և ինչու՞ են սովորել: Դիցուք, մեր հետազոտության ընթացքում շատ կարևորվեց անդրադարձ կատարել այն փորձառություններին, որոնք սովորողները ձեռք բերեցին համայնքային հիմնախնդրի ուսումնասիրության ժամանակ՝ պարզելու, թե ի՞նչ սովորեցին և ի՞նչ հմտություններ ձեռք բերեցին համադասարանցիներով հանրային քաղաքականության մասին թղթապանակը մշակելու ժամանակ, որո՞նք էին թիմով / խմբով աշխատելու առավելությունները կամ թերությունները, ի՞նչը լավ արեցին և, վերջապես, եթե հնարավորություն ունենային կազմել այլ թղթապանակ, ապա ի՞նչը կփոխեին հանրային հիմնախնդրի հետազոտման նախագիծ մշակելիս:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով իրականացված հետազոտական աշխատանքի արդյունքները «Հասարակագիտություն» առարկայից՝ ներկայացնենք հետևյալ եզրահանգումները.

1. Նախագծերի վրա հիմնված ուսուցումը ուսուցման մեթոդ է, որի ընթացքում սովորողները տնական աշխատանքի արդյունքում ձեռք են բերում ավելի խորը գիտելիքներ և հմտություններ, ակտիվորեն ուսումնասիրում, վերլուծում և պատասխանում են բարդ և իրական աշխարհի որևէ կոնկրետ հարցի, խնդրի կամ մարտահրավերի:
2. «Հասարակագիտություն» առարկայից իրականացված նախագծի արդյունքում սովորողը զինվում է տարբեր հմտություններով՝ կարողանալով վեր հանել համայնքում ծագած արդիական և կարևորագույն հիմնախնդիրները:
3. Աշխատանքը հնարավորություն է ընձեռում ճիշտ կողմնորոշվելու ընդունված հանրային քաղաքականության արդյունավետության հարցում:
4. Իրականացված նախագծի արդյունքների հրապարակային պաշտպանությունը բարձրացնում է սովորողի ինքնագնահատականը և նպաստում նրա սոցիալականացմանը:

Այս աշխատանքի հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

- ✓ Ձևավորել ինքնուրույն և կրթական գործում ակտիվ մասնակցություն ունեցող սովորողների համայնք:
- ✓ Զարգացնել սովորողների հետազոտական, ստեղագործական, որոնողական հմտությունները և ճանաչողական հետաքրքրությունը:
- ✓ Նպաստել սովորողների քննադատական մտածողության զարգացմանը:
- ✓ Ձևավորել սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, գլխավորն առանձնացնելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու կարողություններ:
- ✓ Ձևավորել ու զարգացնել գրավոր և բանավոր խոսքի մշակույթ:
- ✓ Ձևավորել խմբերով աշխատելու (համագործակցային) մշակույթ, զարգացնել շփման և հաղորդակցական հմտություններ:
- ✓ Ընձեռել գնահատման և ինքնագնահատման հնարավորություն:
- ✓ Ձևավորել ոչ միայն գիտելիքներ, այլ նաև այնպիսի հմտություններ, որոնք սովորողները կկարողանան կիրառել իրենց պրակտիկ գործունեության մեջ:
- ✓ Ապահովել կյանք – կրթություն իրական կապը:

Թեման ամփոփենք Կոնֆուցիոսի մանկավարժական գաղափարով. ***«Մարդը ողջ կյանքի ընթացքում պետք է ձեռք բերի գիտելիքներ, իմաստավորի դրանք և կիրառի կյանքում»:***

ՀԱՎԵԼՎԱԾ

Հարցաթերթիկ

Հարցազրույցի վարման ձև

Ձեր անուն, ազգանունը՝ _____

Ամսաթիվը՝ _____

Հիմնախնդիր՝ <<Գովազդը՝ որպես կողմնակի ճնշում>>

Հարցաղրվողի անուն, ազգանունը՝ _____

Այդ անձի դերը համայնքում՝ _____

1. *Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք գովազդը կողմնակի ճնշում է:*

_____

2. *Ձեր կարծիքով, կողմնակի ճնշումը մեծ տարածում ունի՞ մեր երկրում:*

_____

3. *Ըստ Ձեզ, գովազդին վերաբերող հիմնախնդիրն ինչպիսի՞ կարևորություն ունի:*

_____

4. *Արդյոք կապ տեսնու՞մ եք գովազդի և Ձեր խնայողությունների միջև: Խնդրում եմ հիմնավորել:*

_____

5. *Կպարզաբանե՞ք գովազդի դրական և բացասական կողմերը:*

_____

6. *Ի՞նչ լեզու է օգտագործվում գովազդում, խնդրում եմ մանրամասնել:*

_____

7. *Ի՞նչ սիմվոլիկա է կիրառվում գովազդի մեջ:*

_____

8. *Ձեր կարծիքով, ինչպիսի՞ հոգեբանական խնդիրներ են առաջանում գովազդի ընթացքում:*

_____

9. *Կարո՞ղ եք հիշել դեպքեր, երբ գովազդը ազդել է Ձեր գնումների վրա:*

_____

10. *Հաղթահարման ինչպիսի՞ ռազմավարություն եք կիրառում գովազդի դեմ:*

_____

11. *Ի՞նչ խորհուրդ կտաք ուրիշներին գովազդի բացասական ազդեցությունից խուսափելու համար:*

_____

12. *Արդյոք գոյություն ունի՞ հիմնախնդրին առնչվող օրենսդրություն:*

_____

13. *Ի՞նչ քաղաքականություն են վարում իշխանության մարմինները հիմնախնդրի լուծման ուղղությամբ: Որո՞նք են այդ քաղաքականության առավելությունները և թերությունները:*

_____

14. *Ինչպե՞ս կարելի է այն բարելավել:*

_____

Պատկեր 1

Սխեմա [7]

[7] «Քաղաքացի նախագիծ: Համայնքային հիմնախնդիրների հետազոտման ուսումնական նախագիծ» գրքույկ, Սիվիտաս Հայաստան, Քաղաքացիական կրթության կենտրոն, Կալաբասաս, Կալիֆորնիա, ԱՄՆ, Երևան 2011

Նկար 1


ԳՈՎԱԶԴԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՂՄՆԱԿԻ ՃՆՇՈՒՄ
ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏՎՈՒՄ Է...

Նկար 2

Պատկեր 2



ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նավասարդյան Ս., Սահակյան Լ, Նախագծային մեթոդը որպես սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց, Մանկավարժություն, 5/2013, էջ 54-63:
2. «Քաղաքացի նախագիծ: Համայնքային հիմնախնդիրների հետազոտման ուսումնական նախագիծ» գրքույկ, Սիվիտաս Հայաստան, Քաղաքացիական կրթության կենտրոն, Կալաբասաս, Կալիֆորնիա, ԱՄՆ, Երևան 2011
3. Маркачев А. Е., Т. А. Боровских, Г. М. Чернобельская. Применение метода проектов в школьной практике, “Химия в школе”. 2007. №2. С. 34-36
4. Ступницкая М.А., Что такое учебный проект? М.: Первое сентября, 2010. — 44 с,, https://project.1september.ru/files/Chto-takoe-uchebniy-proekt.pdf
5. Чайка А. Н.. Метод проектов в образовательном пространстве в школе,Химия в школе. 2006. №6. С. 48-52
6. Шелканова Г. В. , Проектная деятельность учащихся, “Химия: методика преподавания”. 2005. №2. С. 67-71
7. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788